ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոն
rafiknahapetyan@mail.ru
0009-0005-8402-3174
DOI: 10.54503/1829-4073-2025.2.109-125

ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ԶԵՆՔԵՐԻ ՈՒ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամփոփում

Զինագործությունը միջնադարյան Հայաստանում հայերի արհեստագործական ամենահին ճյուղերից էր: Մյուսներից ավելի վաղ անջատվելով դարբնությունից՝ այն ի սկզբանե զուտ քաղաքային արհեստ էր: Հայ զինագործները միջնադարում մեծ համբավ էին ձեռք բերել: Միջնադարյան Անի և Դվին քաղաքները զինագործական արհեստի հայտնի կենտրոններ էին, և այստեղ արտադրվող նիզակների, թրերի, սրերի, դաշույնների, մարտական կացինների և այլ զինատեսակների հռչակը դուրս էր եկել երկրի սահմաններից: Հայ և օտար պատմիչները դարեր շարունակ նկարագրել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ զենքերի ու սպառազինության տեսակները, դրանց առանձնահատկությունները, հաճախ հիացմունքով արտահայտվել դրանց մասին: Մատենագրական նյութերի համաձայն՝ միջնադարյան Հայաստանում գործածվող զենքերը իրենց գործառույթներով դասակարգվում էին հետևյալ տեսակների՝ ա) հարձակողական միջոցներ՝ նետ և աղեղ, պարսատիկ, նիզակ, տեգ, գեղարդ, դաշույն, թուր, սուր, սուսեր, սվին, սակր, վաղր, մուրճ, ճիկռ, բ) բերդեր քանդող մեքենաներ՝ էշ, փիլիկվան, բաբան, գ) պաշտպանական միջոցներ՝ վահան, զրահ և դ) հրձիգ նյութեր: Հայոց զորքի յուրաքանչյուր ստորաբաժանում ուներ իր զինատեսակն ու սպառազենը: Այսպես, հեծելազորը զինված էր նիզակներով, տե-

* *Հոդվածը ներկայացվել է 21.04.25, գրախոսվել է 12.05.25, ընդունվել է տպագրության 29.08.2025:*

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

գերով, սրերով, կրում էր պաշտպանական զրահներ, սաղավարտներ: Ընդ որում, պաշտպանիչ զրահներ էին ամրացվում նաև ձիերի մարմնին: Նետաձիգների կամ աղեղնավորների ջոկատի հիմնական սպառազինությունը նետ ու աղեղն էր: Նետերը մեծ քանակությամբ պահվում էին ռազմիկի կողքից կախված հատուկ պատյանում, որը կոչվում էր կապարճ: Կրում էին պաշտպանիչ վահաններ: Հետևակ զորքը կրում էր վաղր, սակր, գուրզ, թուր: Նրա պաշտպանական զինատեսակներից էին վահանը, զրահը, սաղավարտը և այլն:

Սույն հոդվածում համառոտ ամփոփվել են հայ պատմիչների նմանաբնույթ հաղորդումները, խմբավորվել զենքերը՝ ըստ իրենց տեսակների, գործառույթների և նշանակության:

Բանալի բառեր՝ *միջնադարյան Հայաստան, հայ պատմիչներ, զինագործություն, պարսպաքանդ մեքենա, նետ ու աղեղ, սուր, նիզակ*

Ներածություն

Պատմականորեն թշնամիներով շրջապատված Հայոց աշխարհը դարեր շարունակ ենթարկվել է օտար նվաճողների հարձակումներին, ուստի երկրի պաշտպանությունն ուժեղացնելու համար անհրաժեշտաբար պետք է զարգանար զինագործության արհեստը: Հայ պատմիչների վկայությունների համաձայն՝ Հին Հայաստանում լայնորեն տարածված էր զինագործությունը, իսկ զինագործական նշանավոր կենտրոնների համբավը տարածված էր երկրից դուրս: Հոդվածի նպատակն է ցույց տալ միջնադարյան Հայաստանում զինագործության արհեստի զարգացած լինելը, և որ այն չէր զիջում տարածաշրջանի հզոր պետությունների համանման արհեստին, ավելին, հայ զինագործները իրենք էին պատրաստում հայոց զորքին անհրաժեշտ զենքն ու սպառազենը: Ըստ այդմ, խնդիր է դրվել ներկայացնել գործածված զենքերի տեսակները՝ խմբավորելով ու դասակարգելով դրանք: Հոդվածում կիրառվել են նյութի քննության պատմահամեմատական և համադրական-վերլուծական մեթոդները:

Հայ պատմիչների տեղեկությունները վկայում են Հայաստանի տարբեր վայրերում գոյություն ունեցած զինապահեստների մասին: Այդպիսի մի հիշատակություն է պահպանված Ղևոնդի երկում: Ղևոնդը նախ հիշատակում է Դվինում եղած զինապահեստի մասին և ապա հավելում, որ զորամասերի հետ միշտ տանում էին զինագործ արհեստավորների խմբեր, որոնք ճանա-

պարհին աշխատում էին զորքի կարիքների համար, վերանորոգում էին վնասված զենքերը, կամ պատրաստում նորերը:[1]

Նույն պատմիչի հավաստմամբ՝ Դվինը եղել է զինագործական նշանավոր կենտրոն, որտեղ Արտավազդ Մամիկոնյանը, զինելով իր ջոկատը, հարձակվել է արաբ հարկահանների վրա և Կումայրիում կոտորել նրանց: Այդ առիթով նա գրում է. «Եւ սկիզբն բանիս այսորիկ լինէր ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց. և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղաւարտիւք և ամենայն սպառազինութեամբ...»:[2]

Միջնադարյան Հայաստանում գործածվող զենքերն ըստ իրենց գործառույթների

Հայոց բանակի սպառազինությունը մեծապես նման էր մերձավորարևելյան երկրների բանակների սպառազինությանը: Վերջինս պայմանավորված էր բանակի տարբեր ստորաբաժանումների բավականին մեծ թվով: Ըստ այդմ բազմազան էր նաև սպառազինությունը[3]: Ըստ մատենագրական նյութերի՝ միջնադարյան Հայաստանում գործածվող զենքերը իրենց գործառույթներով դասակարգվում էին հետևյալ տեսակների՝ ա) հարձակողական միջոցներ՝ նետ և աղեղ, պարսատիկ, նիզակ, տեգ, գեղարդ, դաշույն, թուր, սուր, սուսեր, սվին, սակր, վաղր, մուրճ, ճիկռ, բ) բերդեր քանդող մեքենաներ՝ էշ, փիլիկվան, բաբան, գ) պաշտպանական միջոցներ՝ վահան, զրահ և դ) հրձիգ նյութեր:

Հայոց վաղմիջնադարյան բանակի սպառազինության տեսակները ու դրանք գործածող զորականներին լավ է ներկայացրել Փավստոս Բուզանդը. «**Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք** անվրէպք կորովիք, **վաղրաւորք, սակրաւորք**, որք ոչ գիտէին զերկիւղ զանգիտելոյ յարանց յախոյանց. համակ **հեծելազօրք զրահաւոր պատենազէնք**, **սաղաւարտաւորք, դրօշաւորք,** կազմ նշանաւորք բազմաձայն **փողարօքն**»:[4]

Զորատեսակների նման բազմազանությամբ էլ պայմանավորված էր նաև սպառազինությունը: Հնագույն ժամանակներից գործածական են եղել

[1] Տե՛ս **Պատմութիւն Ղեւոնդեայ** 1887, 138 և 148:
[2] **Պատմութիւն Ղեւոնդեայ** 1887, 128:
[3] **Հարությունյան** 2013, 55:
[4] **Փավստոս Բուզանդ** 1987, դպր. Դ, գլ. Ի:

դաշույնը, սուրը, թուրը, սուսերը, սվինը: Սրանք խոցելու և հատելու զենքեր էին: Դաշույնը մոտիկից թշնամուն հարվածելու և խողխողելու հիմնական զենքն էր:

Ամենատարածված զենքերից էին սուրը և պողովատիկ (պողպատյա) սուսերը: Սուսերով կարողանում էին ճեղքել զրահը և զինվորի պաշտպանական երկաթյա ցանցը: Ահա թե ինչ է գրում պատմահայր Մովսես Խորենացին. «Գարգարացվոց դաշտում, Աղվանքում, Տրդատ Մեծի՝ հյուսիսային ցեղերին տված ճակատամարտում, երկսայր սրի հարվածներով կտրեց կես արեց թշնամու [բասիլների] թագավորին և նրա ձիու գլուխն ու պարանոցը»:[5]

Թագավորների, եկեղեցապետերի ու իշխանների գործածության համար զենքերը հատուկ պատվերով պատրաստում էին նաև ոսկուց ու արծաթից և զարդարում թանկագին քարերով: Փ. Բուզանդը Ներսես Մեծի մասին գրում է. «...Զարքունական սուսերն զպողովատիկն զոսկէպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ուներ»:[6]

Մովսես Խորենացու բնութագրմամբ՝ սուրը երկսայրի մի զենք էր, որով հատում-կտրում էին, իսկ ծայրով խոցում:[7]

Թշնամու զինվորներին հատելով ոչնչացնելու համար էր նախատեսված նաև թուրը, որի շեղբի մի կողմն էր միայն կտրող, իսկ մյուս կողմից բութ էր լինում: Սա ձեռնամարտում կիրառվող կտրող և խոցող երկաթե զենք էր և, որպես կանոն, բաղկացած էր երկար սայրից, խաչարդից և բռնակից: Այդ զինատեսակի մասին հիշատակություն ունի Փավստոս Բուզանդը. «...օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն...»:[8] Սուսերի ամենալավ և ամուր տեսակը հայ պատմագիրները կոչել են «սուսեր պողովատիկ»:[9]

Պատերազմական գործողությունների ժամանակ շատ գործածական էր նիզակը: Փավստոս Բուզանդը, խոսելով Պապ թագավորի օրոք սահմանային Գանձակի շրջանում տեղակայված հայկական զորքերի մասին, գրում է, որ նիզակակիր սահմանապահների թիվը երեսուն հազար էր. «Ընտիր ըն-

---

[5] Տե՛ս **Մովսես Խորենացի** 1981, 279:

[6] **Փավստոս Բուզանդ** 1987, 107:

[7] Տե՛ս **Մովսես Խորենացի** 1981, 281:

[8] **Փավստոս Բուզանդ** 1987, դպր. Զ, գլ. Ը:

[9] Տե՛ս **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** 1917, 150:

տիրք, նիզակաւորք կուռ վառեալք պատեզէնք եւ զրահաւորք կազմ ամենայնիւ»:[10] Մեկ այլ առիթով նա նշում է. «Սոյնպէս եւ Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամենայն Հայոց. եւ էին կուռ վառեալք իննսուն հազարք ընտիրք՝ նիզակ ի ձեռքն, թող զսպարակիրս»:[11] Նիզակի գործածությամբ մեծ հաղթանակ տարավ Օշականի ճակատամարտի հերոսներից Վահան Ամատունին:[12] Վերջինս նիզակի ուժգին հարվածով գետին է գլորում թշնամու առաջնորդին: Այդ էլ առիթ դարձավ թշնամիների փախուստին և հայոց զորքին զորացրեց հաղթանակ տանելու: Այդ կարևոր հաղթանակի համար Հայոց արքան Վահան Ամատունուն իբրև պարգև տալիս է Օշականը իր շրջակայքով: Նիզակը կարող էր խոցել հակառակորդի երկաթյա զրահը: Մովսես Խորենացին, խոսելով Տիգրան Երվանդունի թագավորի՝ Աժդահակ արքայի դեմ մղած պատերազմի մասին, նշում է նիզակի խոցող կարևոր հատկության մասին: Աժդահակի երկաթե ամուր զրահը ինչպես ջուր ճեղքելով՝ նրան «շամփրում է իր նիզակի ընդարձակ տեգով, և ձեռքը հետ քաշելիս՝ նրա թոքի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում»:[13] Նիզակը շատ հաճախ թունավորում էին, և թշնամին մեռնում էր թունավորումից:

Հայկական բանակում ամենատարածված զենքերից է եղել նետ ու աղեղը:" Հատկանշական է, որ այս զենքի գործածման վերաբերյալ հիշատակությունների հանդիպում ենք բազմաթիվ պատմիչների երկերում: Այսպես, պատմահայրը հայոց նախնի Հայկին «կորովաձիգ և հաստաղեղն»[14] է համարել, քանզի վերջինս պինդ քաշում է լայնալիճ աղեղը և իր եռասայրի նետով խոցելով սպանում Բելին: Երեքթևյան նետը ծակում է նրա կրծքի պաշտպանիչ տախտակը և սլաքը, շեշտակի թափով անցնելով թիկունքի

[10] **Փավստոս Բուզանդ,** 1987, դպր. Ե, գլ. Զ:

[11] **Փավստոս Բուզանդ,** 1987, դպր. Ե, գլ. Ե:

[12] **Մովսես Խորենացի,** 1981, 319:

[13] **Մովսես Խորենացի,** 1981, 97:

" Հնադարից լայնորեն կիրառված նետող զենք է, որը կազմված է նետող մասից՝ ճկվող աղեղից և պրկվող լարից ու դրանց միջոցով նետվող հարմարանքից՝ նետից: Նետը բաղկացած էր փայտյա բռնածողից և դրա վրա ամրացված նետասլաքից, նախատեսված էր 30–250 մետր և ավելի հեռավորության վրա արձակելու համար: Միջնադարյան Հայաստանի հետևակ և հեծյալ զորաջոկատներում լայնորեն կիրառվող զինատեսակ էր:

[14] **Մովսես Խորենացի,** 1981, 45:

միջով, գետին է խրվում:[15] Եվ պատահական չէ, որ պատմահայրը Հայկի որդիներին ու թոռներին կոչում է «արս քաջս են աղեղնաւորս»:[16]

Եղիշեն գրում է, որ նետերը տարբեր ձևերի էին՝ տերևաձև, կողավոր, գլանաձև, եռաթև, և պահվում էին զինվորի հատուկ պատյանում՝ կապարճում:[17] Ի դեպ, նետասայրը կամ սլաքը, որ երբեմն կոչվել է նաև **ձիգ, փքին** կամ **դերձակ**, փոքր էր և անկոթ, պատրաստում էին օբսիդիան քարից, բրոնզից, երկաթից, իսկ հնում՝ ոսկրից: Եղիշեն նետաձիգների գնդերը անվանել է «մերկեր»:[18]

Ըստ Փավստոս Բուզանդի՝ հայկական աղեղնավորների գնդերը մարտին մասնակցում էին հեռվից, նրանց նետերը դիպուկ և ուժեղ հարվածող էին՝ «աղեղնաւորք, անվրէպք, կորովիք»:[19] Մինչև իսկ նրանք կարողանում էին նետով փղեր տապալել՝ «հարկանէր զնետս փղին և անդէն ընկենոյր զփիղն ի վերայ անձին իւրոյ»:[20] Նրա հավաստմամբ, աղեղնավորները միաժամանակ կրել են նաև սուր:[21] Աղեղնավորների գնդերը, որ սովորաբար գտնվում էին բանակի հետին շարժակազմում, խոշոր դեր են խաղացել Ավարայրի ճակատամարտում: Այդ կռվում Եղիշեն նկարագրում է. «Ճայթմունք լարից աղեղանացն զլսելիս ամենեցուն առհասարակ խլացուցանէին»:[22]

Ղազար Փարպեցին հիշատակություն ունի վարժ նետաձիգների մասին, ինչպիսիք էին Արշավիր Կամսարականը, Մամիկոնյանները, որոնց նա համարում է «ի նետաձգութեան գեղեցկաձիրք և դիպեցուցողք»:[23]

X դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին գովեստով է խոսել հայ մարտիկների հմուտ նետաձիգներ լինելու մասին. «...զնետաձիգս ի լայնալիճ աղեղանց և զքարինս ի պարսատկաց»:[24] Աշոտ Բ թագավորի մղած ճակատամարտերի մասին գրում է. «Վաղվաղակի պատրաստէ նաւս մետասան, և ամբառնայ ի նաւս անդր իբրև արս եօթանասուն ազատս և զծառայս

[15] Տե՛ս **Մովսես Խորենացի,** 1981, 43:
[16] **Մովսես Խորենացի,** 1981, 39:
[17] Տե՛ս **Եղիշէ վարդապետ** 1842, 12:
[18] Տե՛ս **Եղիշէ վարդապետ** 1842, 138–139:
[19] **Փավստոս Բուզանդ,** 1987, դպր. Ե, գլ. Զ:
[20] **Փավստոս Բուզանդ,** 1987, 214:
[21] **Փավստոս Բուզանդ,** 1987, 254:
[22] **Եղիշէ վարդապետ** 1842, 170, 172:
[23] **Ղազար Փարպեցի** 1982, 154:
[24] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** 1912, 234–235:

իւր լայնալիճ աղեղամբք՝ այս քաջակորովս, և հմուտս ի ձգտումն նետաձգութեանց, որ գրեթէ ի մազոյ ոչ վրիպէին»:[25]

Հնագույն հարձակողական մարտական զենք էր պարսատիկը, որի միջոցով թշնամուն հարվածում էին քարերով": Սրա վերաբերյալ ուշագրավ հիշատակություններ են թողել Հովհան Մամիկոնյանը,[26] Թովմա Արծրունին,[27] XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը[28] և ուրիշներ:

Ինչպես վերը նշեցինք, հարձակողական զենքերից էին նաև նիզակը, տեգը և գեղարդը, որոնք ամենագործածական տեսակներից էին: Մովսես Խորենացին նշում է. «...շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստուք երկաթոք պարածածկեալք»:[29] Ըստ Փավստոս Բուզանդի, հայոց բանակում ծանրակշիռ տեղ էին գրավում նիզակավորները, որոնք կռվի էին գնում թե՛ հետիոտն, թե՛ հեծյալ: Նիզակավորները զինված էին նաև պաշտպանական զրահներով: Ըստ նրա՝ նիզակավորները կռվի դաշտում գտնվել են առաջին շարքերում. «Զի յորժամ հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս հարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզոր և անշարժ»:[30]

Պատմիչներից Մովսես Խորենացին, Հովհան Մամիկոնյանը, Արիստակես Լաստիվերտցին և Թովմա Արծրունին տեգի փոխարեն կամ դրան զուգահեռ գործածել են նաև **աշտե** անվանումը,[31] իսկ Մ. Կաղանկատվացին նիզակին զուգահեռ հիշատակում է **մկունդը**:[32] Տեգը կարճ նիզակ էր, կիրառվում էր ոչ շատ հեռու տարածության վրա ձեռքով նետելով թշնամուն հարվածելու համար: Մովսես Խորենացին աշտեի մասին այսպես է գրել. «Հեռի զաշտէսն արձակեալ, որպես ի թռիչս սրաթև հաւուց»:[33] Աշտեն փայ-

---

[25] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** 1912, 234–235, 356:

" Պարսատիկը կաշվե երկար մի երիզ է, կենտրոնը՝ լայն և կրկնածալ գոգավոր մասով, որտեղ դրվում էր պարսաքարը: Այն նախատեսված էր փոքր քարի գնդերը օդում պտտական շարժումով հակառակորդի վրա ուժգին նետելու համար: Միջնադարյան Հայաստանում հայտնի էին պարսավորների ջոկատները:

[26] Տե՛ս **Յովհան Մամիկոնեան** 1941, 236:

[27] Տե՛ս **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** 1917, էջ 214:

[28] Տե՛ս **Ստեփանոս Օրբելեան** 1910, 36:

[29] **Մովսես Խորենացի,** 1981, 86:

[30] **Փավստոս Բուզանդ,** 1987, 303:

[31] Տե՛ս **Յովհան Մամիկոնեան** 1941, 184: **Պատմութիւն Արիստակեսի Լաստիւերտցւոյ** 1963, 139:

[32] Տե՛ս **Մովսէս Կաղանկատվացի** 1969, 310:

[33] **Մովսես Խորենացի,** 1981, 120:

տե երկար կոթով կարճ նիզակ էր՝ ձեռքով հարվածելու կամ նետելու համար: Հնում նիզակի ծայրը բրոնզից էր, միջնադարում՝ երկաթից: Այն շատ գործածական էր մանավանդ որսի ժամանակ: «Բարձեալ աշտեայս հանապազակիր ի պատրաստութեան գազանացն, որ մայրիսն ... եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն...»:[34]

Գեղարդը երկաթաշեղբ նիզակ էր, որը ևս կիրառվում էր մարտական պայմաններում:

Մարտական զենքերի շարքին են պատկանում սակրը, նրանը, վաղրը և ճիկոը՝ հարվածային զենքերը: Պատմագիրները տեղեկություններ են հաղորդել սակրավորների ու վաղրավորների առանձին գնդերի մասին:[35] Փավստոս Բուզանդը հիշատակում է «...սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք, սուինաւորք և սպասակիրք հետևակք»:[36] Հայոց բանակում պարտադիր էր նաև **սակրի** և **նրանի** գործածությունը: Փավստոս Բուզանդը հայկական հետևակ զորքի կրած զենքերից հիշատակում է վահանը և գոտուց կախված սակրը. «...իսկ աջ ձեռն եդեալ էր ի դաստապան նրանին, յոր կապեալն էր յառես ազդրերն իւրում... Եւ լեգէոն սակրաւորքն երկու թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբէ վահանօքն յանկարծօրէն կից ի վեր առեալ զսակուրսն զարկանէր թագաւորին Պապայ...»:[37] Ի դեպ, զինատեսակների շարքում հիշատակված նրանն ըստ երևույթին միաձայրի սուր էր, ծակող զինատեսակ: Իսկ սակրը կամ սակուրը կացնաձև զինատեսակ էր և ուներ ուղղանկյուն կոթառ և կիսաշրջանաձև շեղբ:

Վաղրը երկար շեղբով մարտական կացնի տեսակ էր: Վաղրը սակրից մեծ էր և հնարավոր չէր ամրացնել գոտուն. սովորության համաձայն՝ այն ամրացնում էին ազդրին: Վաղրը սուսերի նման կարող էր կտրել երկաթը: Վաղրով զինվածներին կոչում էին նաև **վաղակաւոր**. «Եւ նախ ասէ զեպիսկոպոսն սուրբ վաղակաւորօքն կարթակոտոր առնէին, իբրև տապարօք շեշտակի շեշտեալ զնա և զկնի ապա հատեալ և սուսերաւ զգլուխ նորա»:[38] Հովհաննես Դրասխանակերտցին առանձնացնում է արաբների դեմ մղած պայքարում վաղրավորների հարվածային զորությունը:[39]

---

[34] **Թովմայի վարդապետի Արծրունւոյ,** 1917, 201–202:
[35] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** 1987, 201–202:
[36] **Փավստոս Բուզանդ,** 1987, 183:
[37] **Փավստոս Բուզանդ,** 1987, դպր. Ե, գլ ԺԲ:
[38] **Ղազար Փարպեցի,** 1982, 154:
[39] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** 1912, 312:

Հայկական բանակում օգտագործվել է ճիկռը, որի մասին տեղեկանում ենք Մատթեոս Ուռհայեցու պատմությունից: Նա տեղեկացնում է, որ ճիկռը երկաթ է հատում. «յայնժամ Ապլղարիպն պողովատ ճկռովն հարկանէր զերկաթի դուռն քաղաքին և պատառեալ զերկաթն և յայն դեհն անցուցանէր, որ անել մնաց ճկռուն մինչեւ ցայսօր ժամանակի. և ի տեղն պնդեցին որպէս զբեւեռն»:[40] Փաստորեն, այն կացնաձև հատող զենք էր: **Սակրը, վաղրը** և սրի մի այլ տեսակ՝ **ճիկռը**, պատերազմի ժամանակ գործածվել են իրենց սուր բերանով թշնամուն ծանր հարված հասցնելու համար: Տապարանման երկբերան սակրը մեր պատմիչներն անվանել են «կտցավոր սակր»:

Իսկ ինչպիսի՞ք էին ռամիկ հետևակի հիմնական զենքերը: Դրանցից էր **վարոցը՝** հաստագլուխ, գամերով ամրացված մահակը, որ կոչվում էր նաև **գուրզ** կամ **լախտ**: Եղել են հատուկ հետևակային զորախմբեր, որոնք հայտնի էին որպես **վարոցաւորք**: Պաշտպանական զինատեսակներից պետք է առանձնացնել վահանը, զրահը, սաղավարտը:

Մետաղե զրահը կարող էր պատրաստված լինել առանձին մասերից՝ թիկնապանակ, լանջապանակ, որ կարող էր պատրաստվել նաև թաղիքից, կաշվից, ինչպես նաև՝ **բազպան** (ձեռքերի համար), **սռնապան** (սրունքների) և անգամ՝ **օդ ոտիցն** կամ՝ **մոյկ** (ոտքերին հագնելու համար):[41] Կային և ամբողջական զրահներ, որ կոչվում էին **զրահ, ճոշ** կամ **ճոշան, ջոշան**:[42] Հայտնի էր նաև հաստ մետաղե լարից խիտ ցանցի նման հյուսված կամ պղնձե ձույլ տախտակներից կամ երկաթե տերևաձև իրար վրա նստող շերտերից զրահը, որ կոչվում էր **վերտ**:[43] Զրահավոր զինվորին Մատթեոս Ուռհայեցին անվանում էր «զգենոյր զգեստ երկաթապատ»:[44]

Միջնադարյան Հայաստանի հայկական զորքի պաշտպանության հիմնական միջոցներից էր հենց զրահավորումը: Սպառազինված հայ զորքին մեր պատմիչներն անվանել են «երկաթապատք», «զրահաւորք», «զրահապատ», «պատենազենք», «շերտաւորք»:[45] Մետաղե զրահները լինում էին հյուսվածքաձև, օղակաձև և շերտավոր: Մովսես Խորենացին, խոսելով Տիգ-

---

[40] **Մատթէոս Ուռհայեցի** 1991, 38:

[41] Տե՛ս **Թովմայի վարդապետի Արծրունւոյ,** 1917, 220, **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ,** 1912, 390:

[42] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի,** 1991, 47–48, 137, 426:

[43] Տե՛ս **Մովսես Խորենացի,** 1981, 280, 281:

[44] **Մատթէոս Ուռհայեցի,** 1991, 12, 230:

[45] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** 1987, 130, 137, 203:

րանի զորքի մասին, հիշում է, որ «մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք... և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել»:[46] Պատմահայրը հետևյալ ակնարկն ունի. «Շէրտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք»:[47] Իսկ Փավստոս Բուզանդն ասում է. «Շէրտափակ զորս»: Ի դեպ, զրահով պաշտպանված էին լինում ոչ միայն զինվորի իրանը, այլև բազուկները, ազդրերը, իսկ դեմքի և գլխի պաշտպանության համար կային հատուկ ծածկոցներ:[48] Մ. Խորենացու հիշատակած «տախտակս պղնձիս թիկանց և լանջաց»-ը համապատասխանում է վարապանակին: Լանջանոցը մեր պատմիչներն անվանել են նաև ճոշ:[49]

Մ. Խորենացին ակնարկ ունի նաև Տիգրան Մեծի ռազմավարության մասին. «Հետեւակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք. և պարսաւորքն առհասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք»:[50]

Ձիերի խոցելի մասերը ևս պատում էին զրահով: Ահա և Թովմա Արծրունու հանգամանալի մի նկարագրություն. «... եւ զերիվարսն և զհեծեալս նոցա զինեալ սպառազինօք, շոնջապահս ձիոցն եւ տաշտս գաւակացն եւ զանգապահս ի չորս կողմանս, ձգեալ եւ լանջանցն զէն, եւ բարձրավիզ խրոխտանացն զրահս, եւ ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, եւ մահիկս լուսնաձեւ ի մէջ ճակատուն կապեալ, եւ զնիւս երիվարացն երկաթապատ պնդեալ, այլ եւ աստի եւ անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձեւ վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն»:[51]

Թովմա Արծրունին հիշատակում է մազե հրակայուն զգեստներ, որոնցով զինվորները պաշտպանվում էին հրդեհից. «Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառեին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց հասուէից կազմեալ... աներկիւղ մնալով ի հրոյն տոչորման է...»:[52]

---

[46] **Մովսես Խորենացի,** 1981, 86:
[47] **Մովսես Խորենացի,** 1981, 86:
[48] Տե՛ս **Մովսես Խորենացի,** 1981, 281:
[49] Տե՛ս **Ներսէս Շնորհալի** 1829, 34:
[50] **Մովսես Խորենացի,** 1981, 86:
[51] **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** 1917, 220:
[52] **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** 1917, 220:

Միջնադարում գործածված զրահները կարելի է բաժանել երեք մասի. առաջին՝ գլխանոց, երկրորդ՝ իրանի պահպանակ (լանջապան) և երրորդ՝ բազուկների ու ազդրերի պահպանակներ («պահպանակք բարձի և բազկի»): Պաշտպանական կարևոր զենք էր վահանը: Վահանով պաշտպանվում էին ոչ միայն անհատապես, այլև զինվորների առանձին խմբեր. նրանք անսպասելիորեն վահանների տակ շղթայով ամուր «բերդեր» էին պատրաստում թշնամու դեմ՝ նման պարսկական բանակի փղերի պատնեշին:[53] Նշենք նաև, որ հեծյալների վահանները չափերով ավելի փոքր էին:

Զրահի կարևոր մասերից մեկը, որ պաշտպանում էր զինվորի գլուխն ամբողջովին, սաղավարտն էր: Այն Փավստոսի և Եղիշեի երկերում կոչվել է երկաթե գլխանոց: Սաղավարտները պատրաստվել են պղնձից և երկաթից: Իշխանական սաղավարտները տարբերվել են շարքային զինվորների սաղավարտներից՝ ունեին տոհմական նշաններ: Օրինակ՝ Մանվել Մամիկոնյանի սաղավարտն ունեցել է արծվի տոհմական նշան: Ստ. Օրբելյանը[54] հիշատակել է վագրապատկեր, իսկ Մ. Խորենացին[55]՝ սաղավարտներին մետաքսյա վիշապներ կրելու մասին: Սաղավարտները հին և միջնադարյան աշխարհում ունեին տարբեր ձևեր և ծառայում էին նաև որպես ռազմական ու սոցիալական աստիճանակարգը բնորոշող տարբերանշաններ:

Պատմիչների տեղեկությունների համաձայն՝ հայ զինվորը, բացի սաղավարտից, կրել է նաև պաշտպանող զրահ, որ հասնում էր մինչև ազդրերը, և դրանց մետաղի կտորները շերտ-շերտ հագցվել են իրար՝ ձկան թեփուկների ձևով: Շերտավոր այդ զրահները, **լանջապանից** բացի, կոչվել են նաև **կողենք**: Զրահի մի այլ տեսակ կոչվել է **վերտք**: Սա էլ պատրաստված է եղել շղթայանման խիտ հյուսվածքով:[56]

Հայ զինվորը սրունքներն ու բազուկները պաշտպանելու համար կրել է նաև **սռնապաններ** ու **բազպաններ** և պատերազմի դաշտում հարմարավետ կոշիկներ՝ **օդ** կամ **մույկ** անվամբ, իսկ զրահի վրա՝ պարեգոտ: Փ. Բուզանդը նկարագրում է հայոց բանակի սպառազինությունը. «Ոտքից մինչև գլուխ երկաթապատ, ամրակուռ և անխոցելի զինվորություն, ուժեղ երիվար և երիվարի անդրդվելի սպառազինություն»:[57] Այստեղ խոսքը Մանվել Մամի-

---

[53] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** 1912, 312:
[54] Տե՛ս **Ստեփանոս Օրբելեան,** 1910, 38:
[55] Տե՛ս **Մովսես Խորենացի,** 1981, 369:
[56] Տե՛ս **Մովսես Խորենացի,** 1981, 280:
[57] **Փավստոս Բուզանդ,** 1987, V դպր., գլ. ԼԵ:

կոնյան սպարապետի սպառազինության մասին է: Ի հակադրություն **գուգազի**՝ անկանոն զորքի (պատերազմի ժամանակ ռամիկներից ու շինականներից հավաքած գունդ)՝ այդպիսի զինվածությամբ աչքի էր ընկնում **մատենիկ** գունդը:[58]

Այժմ հակիրճ ներկայացնենք բերդակործան և բերդապահպան ռազմական միջոցները: Բերդեր քանդելու հիշատակված զինատեսակներից են **էշը, փիլիկվանը** և **բաբանը**: Մ. Խորենացու նկարագրությամբ՝ էշ կոչված պարսպաքանդ մեքենան աշտարակաձև և անվավոր էր, վերևը հաստ փայտերով ծածկված: Զինվորները, պաշտպանվելով այդ փայտե պատնեշի տակ, մեքենան մոտեցնում էին պատին և նրա տակից հատուկ կացիններով, մուրճերով ու սակրով քանդում, խարխլում էին պատի հիմքերը՝ պատը քանդելու կամ անցքեր գոյացնելու նպատակով: Այդ մեքենան կոչվել է նաև խոյ: Մեջբերենք պարսից Շապուհ Բ թագավորի զորքերի կողմից Տիգրանակերտի պարսպի կործանման մասին պատմահոր խոսքերը. «Եւ Յունացն (իմա՝ հռոմեացիները) մատուցեալ մեծաւ բռնութեամբ լեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էշսն: Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով տարեալ, եւ ի ներքուստ կացնովք եւ սակրօք երկբերանովք եւ կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն: Եւ նգախարխար արարեալ զայն, որ ի հայկազնոյն Տիգրանայ (իմա՝ Տիգրան Բ Մեծ – Ռ. Ն.) հոծեալ եւ յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին. եւ հուր ի դրունսն եւ յամենայն կողմանսն վառեալ, եւ քարինք եւ նետք և տեգք արձակեալք լինէին, և խոցոտեալ մերքն յապուշ դառնային»:[59]

Պարսպաքանդ մեքենաներից մեկն էլ կոչվել է **փիլիկվան** (նաև փիլիկոն, փիլիկան, փիլիպա): Ի տարբերություն էշի՝ սրա քանդելու գործիքը հարմարեցված է եղել մեքենայի վրա: Սա պարսպաքանդ ու քարանետ հնագույն պաշարողական սարքավորում էր, բաբանի տարատեսակ: Որ փիլիկվանների գոյությունը գալիս էր հնից, հավաստում է Արիստակես Լաստիվերտցին՝ կապված սելջուկ-թուրքերի կողմից Մանազկերտ քաղաքի պաշարման հետ:[60] Հեթում պատմիչը, խոսելով Հուլաուի արշավանքների մասին, քանդող մեքենաների շարքում հիշում է նույն էշը, կոչում է այն իշավայրի:[61]

---

[58] **Փավստոս Բուզանդ,** 1987, III դպր., գլ. Ը:

[59] **Մովսես Խորենացի,** 1981, 350, 351:

[60] **Պատմութիւն Արիստակեսի Լաստիւերտցւոյ** 1963, գլ. ԺԶ:

[61] **Հեթում պատմիչ թաթարաց** 1842, 47:

Բացի քանդող մեքենաներից, քաղաքների նվաճման համար գործադրել են նաև **բաբան** կոչվող քար նետող մեքենա: Արիստակես Լաստիվերտցին գրում է. «Ապա այլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բաբան կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր ասէին թէ չորս հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանուն քարշէին, եւ վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկսն՝ ի քաղաքն ձգէին. եւ առաջի նորա պարիսպը (Մանազկերտի – Ռ. Ն.) կանգնեցին ի բամբակի բեռանց եւ յայլ բազում կարասւոյ, զի մի քար երիցուն հասցէ ի նա»:[62] Նկարագրության համաձայն՝ բաբանը եղել է մեծ գերան՝ կախված հատուկ հարմարանքով և ամրացված երկաթե գլխիկով: 400 զինվորներ բաբանը շարժել են և հարվածել քաղաքի պարսպին կամ դարպասներին:

Բացի վերոնշյալ մեքենաներից, գործածվել են նաև մի շարք գազային նյութեր, ինչպես հրացանը, որ եղել է հուր ձգող գործիք և նետվել է հատկապես նավերի վրա:[63] Թովմա Արծրունին ընթերցողին ծանոթացնում է այդ հրձիգ նյութերի բաղադրության հետ:[64]

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով միջնադարյան Հայաստանում հարձակողական և պաշտպանական զինատեսակների մասին հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները՝ բավական լայն պատկերացում ենք կազմում հայ ռազմարվեստի վերաբերյալ: Ըստ այդմ ակներև է դառնում, որ զինագործությունը հայերի արհեստագործական ամենահին ճյուղերից էր և ի սկզբանե առավելապես զարգանում էր քաղաքներում: Ըստ մատենագրական նյութերի՝ միջնադարյան Հայաստանում գործածվող զենքերը իրենց գործառույթներով դասակարգվում էին հարձակողական և պաշտպանական միջոցների:

Հայ զինագործները միջնադարում մեծ համբավ էին վայելում, Անի և Դվին քաղաքները զինագործական արհեստի հայտնի կենտրոններ էին, և այստեղ արտադրվող նիզակների, թրերի, սրերի, դաշույնների, մարտական կացինների և այլ զինատեսակների հռչակը տարածված էր երկրի սահմաններից դուրս: Պատահական չէ, որ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ զեն-

[62] Տե՛ս **Պատմութիւն Արիստակեսի Լաստիւերտցւոյ** 1963, գլ. ԺԶ:
[63] Տե՛ս **Սեբէոսի եպիսկոպոսի** 1939, 148:
[64] Տե՛ս **Թովմայի վարդապետի Արծրունւոյ,** 1917, 219–220:

քերի ու սպառազինության տեսակների նկարագրությունները տվել են ոչ միայն հայ, այլև օտար պատմիչները:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Եղիշէ վարդապետ 1842, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, 394 էջ: *(**Ġiše vardapet** 1842, Vasn Vardana ev Hayocʿ paterazmin, Venetik, I Surb Ġazar, 394 ēj). **Eghishe Vardapet** 1842, On Vardan and the Armenian War, Venice, St. Lazarus Press, 394 pages (in Armenian).*

Թովմայի վարդապետի Արծրունեաց 1917, Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, տպ. Աղանեան, 590 էջ: *(**Tovmayi vardapeti Arcrunvo** 1917, Patmutyun tann Arcruneacʿ, Tiflis, tp. Aġanean, 590 ēj). **Tovma Vardapet of Arcruni** 1917, History of the House of Arcrunis, Tiflis, Aghanean Press, 590 pages (in Armenian).*

Հեթում պատմիչ թաթարաց 1842, Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, 90 էջ: *(Hetum patmich tataracʿ 1842, Venetik I tp. Srboyn Ġazaru, 90 ēj). **Hetum the Historian** 1842, Venetian Edition, Venice, St. Lazarus Press, 90 pages (in Armenian).*

Հարությունյան Բ. 2013, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը, սպառազինությունը և ռազմարվեստը, Երևան, Փրինթինֆո, 88 էջ: *(**Harutyunyan B.** 2013, Mets Hayqi tagavorutyan zinvats ujery, sparazinutyuny ev razmarvesty, Erevan, Printinfo, 88 ēj): **Harutyunyan B.** 2013, Armed Forces, Weaponry, and Military Art of Greater Armenia, Yerevan, Printinfo, 88 pages (in Armenian).*

Ղազար Փարպեցի 1982, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ: *(**Ġazar Parpecʿi** 1982, Hayocʿ patmutyun, Yerevan, EPH hrat., 540 ēj). **Ghazar Parpetsi** 1982, History of the Armenians, Yerevan, YSU Press, 540 pages (in Armenian).*

Մատթեոս Ուռհայեցի 1991, Ժամանակագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 538 էջ: *(**Matteos Urhayecʿi** 1991, Žamanakagrutyun, Yerevan, EPH hrat., 538 ēj). **Matthew of Edessa 1991,** Chronicle, Yerevan, YSU Press, 538 pages (in Armenian).*

Մովսես Խորենացի 1981, Հայոց պատմություն, Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. և մեկնաբ. Ստ. Մալխասյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 588 էջ: *(**Movses Xorenacʿi** 1981, Hayocʿ patmutyun, Knnakan bnagiry M. Abeġyani ev S. Harutyunyani: Ašxarhabar targm. ev meknab. St. Malxasyani, Yerevan, EPH hrat., 588 ēj). **Movses Khorenatsi** 1981, History of the Armenians, Critical Edition by M. Abeghyan and S. Harutyunyan; World Translation and Commentary by St. Malkhasyan, Yerevan, YSU Press, 588 pages (in Armenian).*

Մովսես Կաղանկատվացի 1969, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան», 321 էջ: *(**Movses Kaġankatvacʿi,** 1969, Patmutyun Aġvanicʿ ašharhi, Yerevan, "Hayastan", 321 ēj). **Movses Kagankatvatsi** 1969, History of the Aghvank (Caucasian Albania) Region, Yerevan, "Hayastan", 321 pages (in Armenian).*

Յովհան Մամիկոնեան 1941, Պատմութիւն Տարօնոյ: Կազմ. և առաջաբան՝ Աշ. Աբրահամյան: Մասն. խմբ.՝ Ե. Տեր-Պետրոսյան, Երևան, ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Պե-

տական Ձեռագրատուն (Մատենադարան), 300 էջ: ***(Hovhan Mamikonean*** *1941, Patmutyun Tarono. Kazm. ev arajaban Aš. Abrahamyan. Masn. xmb. E. Ter-Petrosyan, Yerevan, HSSR Žoġkomsovetin kic՝ Petakan Jeragratun (Matenadaran), 300 ēj).* ***Hovhan Mamikonean*** *1941, History of Taron, compiled and prefaced by Ash. Abrahamyan; partially edited by E. Ter-Petrosyan, Yerevan, State Manuscript Repository (Matenadaran), 300 pages (in Armenian).*

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ 1912, Պատմութիւն հայոց, Թիֆ-լիս, տպ. օր. Ն. Աղանեանցի, 427 էջ: *(**Hovhannu katoġikosi Drasxanakertc՝vo** 1912, Patmutyun hayoc՝, Tiflis, tp. Or. N. Arameanc՝i, 427 ēj).* ***Hovhannes Draskhanakertts****i 1912, History of the Armenians, Tiflis, printed by N. Aghaneants, 427 pages (in Armenian).*

Ներսէս Շնորհալի 1829, Ողբ Եդեսիոյ, Տփղիս, ի Տպարանի Ներսիսեան դպրոցի Հայոց, 110 էջ: *(**Nerses Šnorhali** 1828, Voġb Edesio, Tpġis, I Tparani Nersisean dproc՝i Hayoc՝, 110 ēj).* ***Nerses Shnorhali*** *1828, Lament of Edessa, Tiflis, Nersisian School Press, 110 pages (in Armenian).*

Պատմութիւն Արիստակեսի Լաստիւերտցւոյ 1963, աշխատասիրությամբ Կ.Ն. Յուզբաշյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 158 էջ: *(Patmutyun Aristakesi Lastivertc՝vo 1963, ašxatasirutyamb K.N. Yuzbašyani, Yerevan, HSSR GA hrat., 158 ēj). History of Aristakes Lastivertsi 1963, edited by K.N. Yuzbashyan, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 158 pages (in Armenian).*

Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց 1887, Ս. Պետերբուրգ, Ի տպարանի Ի.Ն. Սկորոխոդովի, 201 էջ: *(Patmutyun Ġevondea meci vardapeti Hayoc՝ 1887, S. Peterburg, I Tparani I. N. Skoroxodovi, 201 ēj). History of the Armenians, St. Petersburg, I. N. Skorokhodov Press, 201 pages (in Armenian).*

Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն 1939, Երևան, «Արմֆան», 216 էջ: *(**Sebeosi Episkoposi Patmutyun*** 1939, Yerevan "Armfan", 216 ēj).* ***Sebēos, History,*** *1939, Yerevan, "Armfan," 216 pages (in Armenian).*

Ստեփանոս Օրբելեան 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանի, 618 էջ: *(**Stepanos Orbelean*** 1910, Patmutyun nahangin Sisakan, Tiflis, tp. N. Aġaneani, 618 ēj).* ***Stepanos Orbelian****, History of the Province of Sisakan, Tiflis, published by N. Aghanean, 1910, 618 pages (in Armenian).*

Փավստոս Բուզանդ 1987, Պատմություն Հայոց, բնագիրը՝ Քերովբե Պատկանյա-նի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 456 էջ: *(**Pavstos Buzand*** 1987, Patmutyun Hayoc՝, bnagiry Kerovbe Patkanyani, targm. ev canot. St. Malxasyani, Yerevan, Yerevani hamlsarani hrat., 456 ēj).* ***Pawstos Buzand*** *1987, History of the Armenians, original by Kerovbe Patkanyan; translated and annotated by St. Malkhasyan, Yerevan, Yerevan University Press, 456 pages (in Armenian).*

RAFIK NAHAPETYAN
Doctor of History, Professor
YSU Chair of Archaeology and Ethnography
rafiknahapetyan@mail.ru
0009-0005-8402-3174

ARMENIAN HISTORIANS ABOUT THE WEAPONS AND ARMAMENT USED IN MEDIEVAL ARMENIA

Summary

Gunsmithing was one of the oldest branches of craftsmanship of Armenians. Having separated from blacksmithing earlier than other types of craftsmanship, it was originally a purely urban craft. Armenian gunsmiths gained great fame in the Middle Ages. The medieval cities of Ani and Dvin were well-known centers of armory manufacturing. The fame of spears, swords, sabers, daggers, battle axes and other weapons produced here went beyond the borders of the country. For centuries, Armenian and foreign historians have described the characteristic features of the types of weapons and armaments typical of the given period and often expressed admiration about them. According to literary sources, the weapons used in medieval Armenia were classified by their functions into the following types: a) offensive weapons such as bow and arrow, slingshot, spearhead, javelin, lance , dagger, glaive, sword with a curved blade, sabre, *bayonet*, *poleaxe*, *vaghr* (axe-shaped weapon), hammer, pickaxe; b) siege engines such as battering ram, *pilikvan*, *baban*; c) defensive equipment such as shield, armor; and d) explosives. Each unit of the Armenian army had its own type of weapon and equipment. Thus, the cavalry was armed with lances, spearheads, and swords; they wore defensive armor and helmets. Moreover, horses were also covered with protective armor. The primary weapon of the archers' unit was the bow and arrow. Arrows were kept in large quantities in a special case called a quiver, which hung from the warrior's side. They wore protective shields. The infantry carried *vaghr, i.e.* axe-shaped weapons, poleaxes, maces, glaives. Their defensive equipment included shields, armor, helmets, etc.

This article aims to summarize the information covered in the works of Armenian historians and classify the types, functions, and significance of the weaponry mentioned by them.

Key words: *medieval Armenia, Armenian historians, gunsmithing, siege engine, bow and arrow, sword, spear.*